

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, ք.գ.դ., պրոֆեսոր

_____ Գ.Կ. Խաչատրյան

“_30_”_06_2011թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ ՊՈԱԿ գիտխորհրդում
(արձանագրություն թիվ 6. “_30_”_06_____2011թ.)

I. Ընդհանուր դրույթներ

1.1. «Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գիտական խորհրդին կից արտաքին կապերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է համաձայն Ինստիտուտի կանոնադրության և Ինստիտուտի գիտական խորհրդի կանոնադրության:

1.2. Արտաքին կապերի հանձնաժողովը հանդիսանում է Ինստիտուտի գիտական խորհրդին առընթեր մշտապես գործող խորհրդակցական մարմին:

1.3. Հանձնաժողովը իր աշխատանքում ղեկավարվում է ՀՀ Կրթության մասին օրենքով, Ինստիտուտի կանոնադրությամբ, նորմատիվային-հրահանգչային փաստաթղթերով և սույն Կանոնակարգով:

1.4. Հանձնաժողովը համագործակցում է Ինստիտուտի գիտական խորհրդի այլ մշտական հանձնաժողովների, ղեկանատների, ամբիոնների և այլ կառուցվածքների հետ:

II. Հանձնաժողովի նպատակները

2.1. Նպաստել արտաքին կապերի բնագավառին վերաբերող Ինստիտուտի գիտական խորհրդի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, Ինստիտուտի արտաքին կապերի ոլորտին վերաբերող գործունեության իրականացմանը:

2.2. Ինստիտուտի գիտական խորհրդի կողմից քննարկվող արտաքին կապերին վերաբերող հարցերի ուսումնասիրություն:

III. Հանձնաժողովի գործառույթները

3.1. Հանձնաժողովը.

3.1.1. ներկայացնում է գիտական խորհրդին առաջարկներ՝ Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող հարցերն Ինստիտուտի գիտական խորհրդի աշխատանքային պլանների մեջ ընդգրկելու մասին,

3.1.2. ներկայացնում է արտաքին կապերի ոլորտին վերաբերող բացատրագրեր,

3.1.3. կատարում է Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող գիտական խորհրդի որոշումները,

3.1.4. իր գործունեության մեջ ղեկավարվում է Ինստիտուտի զարգացման հայեցակարգի դրույթներով:

IV. Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները

4.1. Հանձնաժողովն իրականացնում է իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով.

4.1.1. Ինստիտուտի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացվող արտաքին համագործակցության ոլորտին վերաբերող ծրագրերի, համաձայնագրերի, պայմանագրերի քննարկում,

4.1.2. արտասահմանյան բուհերում Ինստիտուտի դասախոսների որակավորման բարձրացման նպատակով գիտխորհրդին առաջարկների ներկայացում,

4.1.3. առաջարկներ՝ ուսանողների փոխանակման ծրագրերին Ինստիտուտի ուսանողության մասնակցության վերաբերյալ ,

4.1.4. առաջարկներ՝ ՀՀ այլ բուհերի հետ համագործակցության ծրագրերի մշակման վերաբերյալ,

4.1.5. առաջարկներ՝ արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերին և նախագծերին մասնակցելու վերաբերյալ,

4.1.6. մասնակցություն միջազգային գործունեության առաջնային ուղղություններին առնչվող քննարկումներին,

4.1.7. առաջարկներ՝ միջազգային գիտատեխնիկական և կրթական կապերի զարգացման վերաբերյալ:

V. Հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը

5.1. Հանձնաժողովի կազմը ձևավորվում է Ինստիտուտի աշխատակիցներից և ուսանողներից և գործում է մինչև գիտական խորհրդի լիազորությունների ավարտը: Հանձնաժողովի կազմը և նախագահը հաստատվում են ռեկտորի հրամանով՝ գիտխորհրդի որոշման հիման վրա:

5.2. Հանձնաժողովն անցկացնում է իր նիստերը ամիսը մեկ անգամ՝ համաձայն նախագահի կողմից հաստատված աշխատանքային պլանի: Հանձնաժողովի նիստերը սղագրվում են և ձևակերպվում արձանագրությունների տեսքով: Հանձնաժողովի արտահերթ նիստերը գումարվում են գիտխորհրդի հանձնարարությամբ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ:

Հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր՝ Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդից ավելիի մասնակցության դեպքում:

5.3. Հանձնաժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հանձնաժողովի անդամ չհանդիսացող գիտխորհրդի այլ անդամներ:

5.4. Հանձնաժողովի որոշումները ընդունվում են նիստի մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ: **Ընդունված որոշումները տեղադրվում են Ինստիտուտի կայքում, տարածվում ներքին ցանցով:**

5.5. Հանձնաժողովը տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս գիտխորհրդին իր աշխատանքի մասին:

5.6. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ:

VI. Հանձնաժողովի նախագահի գործառույթները և իրավունքները

6.1. Հանձնաժողովի նախագահի գործառույթներն են.

- ապահովել Հանձնաժողովի խնդիրների և աշխատանքների կատարումը,
- հաստատել Հանձնաժողովի պլանները և հաշվետվությունները,
- ընդունել որոշումներ՝ Հանձնաժողովի գործունեության վիճահարույց հարցերի վերաբերյալ,
- Ինստիտուտի գիտխորհրդին ներկայացնել հաշվետվություններ Հանձնաժողովի աշխատանքի մասին,
- ապահովել Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների վարումը և պահպանումը,
- անհրաժեշտության դեպքում գումարել Հանձնաժողովի արտահերթ նիստեր:

6.2. Հանձնաժողովի նախագահի իրավունքներն են.

- ներկայացնել Հանձնաժողովը Ինստիտուտի գիտխորհրդում,
- ներկայացնել առաջարկներ Հանձնաժողովի կառուցվածքի, կազմի և գործառույթների փոփոխության, աշխատանքի որակի բարձրացման վերաբերյալ,
- պահանջել Ինստիտուտի ստորաբաժանումներից Հանձնաժողովի աշխատանքի համար անհրաժեշտ տեղեկատվություն,
- մասնակցել Ինստիտուտում անցկացվող Հանձնաժողովի գործառույթներին վերաբերող խորհրդակցություններին:

6.3. Հանձնաժողովի անդամները պարտավոր են ակտիվ մասնակցություն ունենալ նրա աշխատանքներին, ժամանակին կատարել իրենց վրա դրված պարտականությունները, ներկայացնել Հանձնաժողովի աշխատանքների բարելավմանն ուղղված առաջարկներ: